ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԱՀԱՅ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Մայիսի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհարանի հարկի ներքո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ֆրանսահայ մի խումբ ուխտավորների՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բարերար Սարգիս Պետոյանի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը գոհունակությամբ ողջունեց ուխտավորների այցը Հայրենիք և համայն հայ ժողովրդի համար նվիրական հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Վեհափառ Հայրապետը ուխտավորներին ներկայացրեց Եկեղեցու առջև ծառացած մարտահրավերները և ներկայիս գործունեությունը՝ եկեղեցականների պատրաստության, ժողովրդի քրիստոնեական դաստիարակության, եկեղեցաշինության և սոցիալական ծառայության ոլորտներում:

Ամենայն Հայոց Հայրապետը նաև իր գնահատանքն ու օրհնությունը բերեց տիար Սարգիս Պետոյանին իր եկեղեցասեր գործունեության համար: Տեր և տիկին Ալեն Մանուկյանների և Սարգիս Պետոյանի ազնիվ բարերարությամբ Սևանում կկառուցվի քաղաքի առաջին եկեղեցին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ